ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՌՈԲԵՐՏ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

21.09.2025

Սիրելի՛ հայրենակիցներ

Անկախությունը մեզ համար ոչ միայն պատմական փաստ է, այլև ամեն քաղաքացու ամենօրյա աշխատանքն ու պատասխանատվությունը:

Շնորհավորում եմ բոլորիս յուրաքանչյուր հայի համար կարևորագույն տոներից մեկի՝ Հայաստանի անկախության օրվա կապակցությամբ:

Երեսունչորս տարի առաջ այս օրը վերականգնելով ու ամրապնդելով ազգային ինքնության մեր խորհրդանիշը՝ հաստատեցինք նաև հավատարմությունը մեր նախնիներին, որոնք երազում էին տեսնել հայրենիքը՝ որպես անկախ ու ազատ երկիր: 1991-ին վաստակեցինք սեփական պետությունը կառուցելու իրավունքը, բայց անկախությունը ոչ միայն դարակազմիկ հաղթանակ է, այլև մեծ պատասխանատվություն թե՛ անցյալի հանդեպ, թե՛ գալիք սերունդների առջև:

Ուստի այսօր՝ մեզ վստահված ներկայում, պարտավոր ենք ամրապնդել մեր պետականությունը, զարգացնել այն կենսական բոլոր ոլորտներում և ստեղծել պայմաններ արժանապատիվ կյանքի համար՝ ժառանգելով այդ ամենն արդեն հայ ազգի ապագա զավակներին:

Հավատում եմ, որ միասին՝ համախմբվածությամբ, քրտնաջան աշխատանքով և վաղվա հանդեպ հավատով, կհաղթահարենք բոլոր մարտահրավերներն ու կդարձնենք Հայաստանն առավել ուժեղ, պաշտպանված, անվտանգ ու բարգավաճ՝ հզորացնելով տնտեսությունը, պահպանելով մեր մշակույթն ու ավանդույթները:

Մեր երկրի ապագան կախված է յուրաքանչյուրիս նվիրվածությունից և Հայրենիքի հանդեպ սիրուց:
Տոնական այս օրը մաղթում եմ բոլորիդ խաղաղություն, լավատեսություն, բարեկեցություն, շարունակական հաջողություններ՝ ի շահ մեր ընտանիքների ու ի շահ հայրենիքի:

Թո՛ղ Հայաստանի Հանրապետության անկախությունը միշտ լինի անսասան հենասյուն մեզանից յուրաքանչյուրի համար, իսկ մենք զորավիգ լինենք նրան՝ ամեն օր այդ հենասյունն ամրացնելու վճռականությամբ ու արարմունքով:

Շնորհավո՛ր Հայաստանի անկախության տոնը: